

տաց անտի, եւ ելեալ յանդրուարն<sup>1</sup> դիմոսական եւ բազում պատիւ գտեալ, հասանէին ի թագաւորակաց քաղաքն Կոստանդինական: 7 Չորմէ իսկոյն պատմէին յարթունիսն, եւ մտեալ առաջի պատուական այթռոյն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն եւ հայրապետին սրբոյ կաթողիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատտիկոս կոչէին, յորոց եւ գտեալ շնորհս: 8 Յրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել<sup>2</sup> դարմանաւք կարգելովք յեկեղեցւոյն եւ յարթունեաց եւ ի պատուական իշխանաց քաղաքին:

9 Եւ ապա յետ Պասեքին կատարելոյ՝ ցուցեալ<sup>3</sup> կայսերն զպիտոյիցն զհանգամանս<sup>4</sup>, եւ առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերաւք կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն<sup>5</sup> Յայոց ժողովելոյ, եւ վասն ժանտագործ ազգին բարբարիանոսաց<sup>6</sup>, եւ եկեղեցեաց հաստատութեան<sup>7</sup>, եւ մեծամեծ պարգեւաւք պատուելոյ<sup>8</sup>: 10 Վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին<sup>9</sup> զարթունիսն, անընկալ<sup>10</sup> թողոյր: 11 Եւ երկիր պագեալ ծիրանափառ աւզոստականացն<sup>11</sup> եւ սրբոյ<sup>12</sup> կաթողիկոսին, եւ ընկալեալ ողջոյն յեկեղեցւոյն եւ յերեւելի իշխանաց<sup>13</sup> քաղաքին, եւ<sup>14</sup> ամենայն իւրայովքն<sup>15</sup> յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս եւ ի կառս արթունատուրս, եւ մեծաւ շքով եւ բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արթունականս: 12 Եւ ամենայն քաղաքացն պատահելով, ի քաղաքին պայծառագոյն երեւէին:

13 Եւ մեծամեծ պարգեւս գտեալ, զային հասանէին ի ժամադիր<sup>16</sup> կողմանս: 14 Եւ անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Յայոց, հանդերձ<sup>17</sup> սակերաւք կայսեր<sup>18</sup> յանդիման լինէին: 15 Եւ նորա առեալ սակերս

1 *բոլորը*՝ յանարոյն *ուղղ.* յանդրուարն

2 *b* մեծարեալ

3 *c* լցուցեալ

4 *bc* հանգամանսն

5 *b* ազգին

6 *բոլորը*՝ բարբարոսաց *ուղղ.* բարբարիանոսաց, *իւչպէս է քիչ յետոյ*

7 *c* հաստատութեանն

8 *բոլորը*՝ պատուել *ուղղ.* պատուելոյ

9 *c* *ուղղ.* ճշմարտասիրին

10 *c* *ուղղ.* անակընկալ

11 *d* օգոստականաց

12 *b* սրբոյն

13 *abcde* իշխանացն

14 *abce* չիք եւ

15 *bc* իւրայօքն

16 *e* ժամադիրս

17 *de* չիք հանդերձ

18 *b* հանդերձ սակերօք հանդերձ կայսեր